



ՄԵՐ ԻԴԵԱԼԻՍԸ

Տ. Ա. Կ Ո Ւ Թ Ի


(Պրէսանսէի նկարով)

II

326

11
326

ԿՊՎ



ՄԵԾԻ ԻԴԵԱԼԻՍՏԸ



ԺԵՂՈՎԻԹԻՒՆՆԵՐ

Է. ԱԿԱՑԻՆԻ

(Ձ. Գլ. ՊՐԵՍՍԱՆԱԼԻ ՆԿԱՐՈՎ)



Համար.

Արքայի Ժող. Գրականականոցի

1914

Կ.ՊՈՒ.Խ



11-326912



Յ. ՏԸ ՊՐԵՍՆԱՆԱԼ

ՄԵԾ ԻԴԷԱԼԻՍԸ

Հապեց, այլ երազեց

I

Յունուար 22ին Ֆրանսիան հողի մէջ դրեց իր մտքի, իր խղճի, իր փառքի մի կտորը։ Վաթսունամեայ մարմնի մէջ թագնուած՝ յաւէտ երիտասարդ հոգին էր, որ գնաց հանգիստ առնելու Մօնսպառնասի սպաւոր հողաբաժնի մէջ . . .

Տամներկու տարի կայ, որ առաջին անգամ Ֆրանսիս դր Պրէսանսէն տեսներու հաճոյքն ունեցայ։ Յետոյ՝ շատ անգամներ առիթը և հարկը ներկայացաւ գիմնազ նրա խորհրդին ու աջակցութեան, միշտ նոյն խնդրով, միշտ նոյն ցաւի համար — ցաւը մեր տանջուած ժողովրդի։ Վերջին անգամ, 1911ին էր, որ բարեկամներով գնացինք յարգանք մատուցանելու միծ Քաղաքացուն, իր անկաշառ ու անխոնջ աջակցութեան համար, որ գրչով ու խօսքով բերում էր Սրբւելքի հալածական ժողովուրդներին։

Եւ միշտ նոյնն էր նա։

Բաղմած իր տոհմական բազկաթոռի
վրայ, Պօր-Ռուայտի փոքրիկ բակի պարզ
տնակի մէջ, շըջապատռւած մի քանի հա-
մեստ ծառերով, բայց մանաւանդ իր սի-
րահար գրքերի ու թերթերի ահազին կոյ-
տերով — նա երազում էր: Երազում էր
անձանօթ մարդոց, անձանօթ ժողովուրդ-
ների, անձանօթ ցաւերի համար: — Երբեմն
նրա զգայուն միտքը պատում էր Մակե-
դոնսկան լեռների վրայ, ուր տասը տարի
առաջ ահաւոր տեսարաններն էին օրուան
«նորութիւնները»: Երբեմն նա փոխադրում
էր իր միտքն ու սիրո Հայկական Բարձ-
րաւանդակը, որը սիրեց ու գգուեց զգա-
յուն իր հոգու ամբողջ թափով: Երբեմն
Լիհական վիշտը եղաւ նրա սրաի տառա-
պանքը, և երբեմն էլ «խաղաղութեան մէջ
ըմբոսա» Ֆինանդիան էր, որ փոթորկեց
նրա զրիչը Էօրեպէենի էջերի մէջ, միտ
մնալով հաւատարիմ ու անկեղծ երդիչը
Ռուսական Մեծ Յեղափոխութեան, ան-
դրդուելի զինուորը և հարազատ սպասա-
ւորը միջազգային լաւագոյն գաղափարին—
Սօցիալիզմն, և մանաւանդ լուրոր երկների
աշխատաւորներին, որոնց տառապանքի
խմաստասէրն էր նա իր քաղաքական դա-
ւանանքով, մտածողի ու գրողի իր ան-
ստահան հաւատով:

Մանկութեան ու պատանեկութեան
օրերին միայն նա պատկանեց իր ընտա-
նիքին, ու իւրայիշներին վերադարձաւ
մահւամբ, — նրա աճիւնը պիտի հանգս-
տանայ Շատիլյոնի տոհմական դամբարանին
մէջ: Այս երկու ծայրերից գուրս, Պրէ-
սանսէի ամբողջ կերանքը արտացնտանե-
կան էր, նուիրած տանջուածների ու հա-
լածուածների բիւրանդամ ընտանիքին:

Մտերիմ գաղափարակիցների հետ իսկ
նա շատ քիչ էր խօսում իր ընտանեկան
անցեալի մասին, մինչ ուրիշները նմանօ-
րինակ մի ծագում պատւանդան պիտի
դարձնէին անյագ գովքի: Հայրը, կամօն
ուր Պրէսանսէ — հանրապետական, սենա-
տոր, գալվինիստ, յայտնի պաստէօր և հե-
ղինակ շատ զբարի, մտերիմ բարեկամն էր
Գիզօր և Թիէսի, Մայրը, Օր. է իս Դիւսպիսի
Քուրէ, Շվեյցարուհի, օժտուած զրողի
ձիրքով ու Շվեյցարական ազատաշունչ
բանաստեղծուհիի ոգով, նոյնպէս հեղինակ
մի քանի զրուածքների: Նրանց զաւակը
ծնվեց 1853ին, և նոյնակից ժաւանգեց.
անւան նետ միտսին, մտաւորական կին-
ցաղի սէրն ու խորհողի ձգտումը: Կօն-
տօրսէի Լիցէսնի աշակերտը, Պրէսանսէ
զրաւեց ընդհանուր ու շաղըութիւն իր

ձիրքերով։ Լեզուների մէջ նոյնքան ընդունակ էր, որքան պատմութեան, ու գրականութեան նոյնքան սիրահար, որքան և մաթեմատիկային։ Դասական գրականութիւնը նրա գտառնցանքն էր։ 1870ի պատերազմին, երբ նա հազիւ 18 տարեկան գինուորազրվեց հայրենիքի պաշտպանութեան և գերի ընկաւ թշնամուձեռքը, մի օր նրան գտան խորասուզված Հերօութիւնից ընթերցանութեան մէջ։ դասական հին հեղինակի չունչով էր ուղում նա մոռանալ դաժան իրականութեան դառնութիւնը...

Պատերազմից յետոյ՝ վերադառնալով ընդհատուած ուսման, Պրէսանսէ աւարտեց իրտւաբանութիւնը ու կրթական նախարարութեան մէջ շատ կարճ պաշտօնավարելուց յետոյ, անցաւ դիւանադիտական ասպարէզը, — ամենաանյարմարը իր մատնութեան ու ձգտումների համար։ 1880ին առաջին քարտուղար Պոլսի դեսպանատան մէջ, 1881ին նոյն պաշտօնով Վայնկոցն, յաջորդ տարին, 1882ին նա նետեց իրանից դիւանադէտի ծանր վերարկուն ու մտաւ ասպարէզը քաղաքական գործունէութեան, դրչով ու խօսքով...

III

Երկու մարդ չը կար Պրէսանսէի մէջ, սովորական այս աշխարհի վրայ — մարդը խօսքի, և մարդը գործի։ Մի էր նա։ Տիւպար հաղաբացի, այս բառի բարձր ու սրբազն մտքով։ Զաւակ շատ բարձրադիր ընտանիքի, ծնողներից ժառանգած բաւական հարստութիւն, նա կեսանքի սանդուխների վրայ թողեց ամէն ինչ. մոռացաւ իր ծագումը և եղաւ ժողովրդի սպասաւոր, ձեռքին բռնած գաղափարի ու քարոզի վառ ճրագը։ Զօգտուեց անձնական հաճոյքների համար՝ իր ժառանգած հարստութիւնից, և վերջին մնացորդը՝ մօտ 50 հազար ֆրանք նույիրեց թրանսիական Ընկերվարութեան միծ օրդանին, Խւմանիքին, իրրեւ մէկը նրա հիմնադիրներից, և յիսուն տարեկան հասակին մէջ, մարմնով ել տկար, մնաց առանց դրամական միջոցների, առանց հաստատուն եկամուտի։ Միջոց միայն պահեց իրան — զրիչը, որ շարժում էր օրն ի բուն, և խօսքը, որ հոսում էր անդադար, և մասնաւոնդ իր յարածուն ամբարը — միտքը, որ իր գլխաւոր հաճոյքն էր և հպարտութիւնը, և եթէ կամենաք՝ միակ փառասիրութիւնը, ներքին, ներարժէք փառասիրութիւնը, որ ազնուագոյնն է բոլոր փա-

ռասիրութիւններից, եթէ միայն այդ ա-
նունը կարելի է տալ անհատի ու գործողի
բնածին արժանիքին...

Ու ամբողջ քան տարի, իր համեստ
բնակարանի մէջ, միապաշտղ ու գրօշ-
մուած ճնողական հին յոյզերով, Պրէսանսէ
այլ հաճոյք չունեցաւ, բայց եթէ երազի
ու աշխատանիքի հաճոյքը: Մօր մահից յե-
տոյ, որին սիրում էր վիպական քնքու-
թեամբ, նա մնաց մեն-մենակ զառամեալ
ազախնի հետ, որ միակ կենցանի վերյի-
շումն էր անհետացած սիրասուն մօր, տոհ-
մական այլ համեստ յիշատակարանների
հետ, որոնք կախուած պատերից, իբրև
նկար, և դրուած հին սեղանների վրայ,
իբրեւ զարդեր, հանգստութեան հազուա-
գիւտ բագէններին, թերեւս, տանում էին
Մաքի Մշակը դէպի իր մանկութեան հե-
ռաւոր տարիները, դէպի այն անհոգ օրեր: .
Երբ հարուստ ու ազնուական ընտ անիքի
ծոցի մէջ չէր էլ երեւակայում թէ հոգե-
կան ի՞նչ դառնութիւններ են սպասում
իրան համաշխարհային մեծ ցաւի Պան-
թէօնի մէջ, այն փոստ ճանապարհին, որով
պէտք է անցնել՝ գմբաղդներին ծառայելու
համար:

Համեստ մի ճաշարան, շատ համեստ
մի ընդունարան, և վերի յարկի վրայ իր
խորհրդաւոր աշխատանոցը, բոլորն էլ կեն-

դանի վկայ, որ այդ խորանի մէջ ապրու-
ղը չէ վայելում ո՛չ խորափիկներ, ոչ ժա-
մանցի գինովցնորդ վայրկեաններ, և ոչ էլ
ապագայ հանգստութեան վայրիայուն ծը-
րագիւններ: Բոլորովին հակառակը: Այն-
քան միայն կար, որով կարողանար համե-
գստացնել իր յոգնած, սիրուն զլուխը, և
տաքացնէր իր բոյնը, մտածողի այդ
համեստ անկիւնը:

Ութ տարի: 1902—1910, նա Լիօնի
շրջանի պատգամաւոր եղաւ Պարլամէնտի
մէջ, բայց իր ամսականի մեծ մասը ծառա-
յում էր կարօտ բարեկամներին ու քար-
տուզարներին: Եւ երբ, ի մեծ նախա-
տինք Լիօնի շրջանի, 1910ին նա անկարող
եղաւ վերլինորուելու, և ստիպուած՝ ծանր
հիւանդութեան պատճմուով՝ երկար ա-
միսներ անկողնին ծառայեց, Պրէսանսէ,
զրչի և մոքի այդ հական մնաց առանց
միջոցների, առանց համեստ ապրուստն իսկ
ապահովող եկամուանների: Նա վաղուց
հեռայիկ էր ֆանից, որի առաջնորդող-
քաղաքական յօդուածները 16 տարիներ
նրա անման գրչի պատցն էին, և որից
նա ապահով եկամուա ունէր: Ու ստիպ-
ուած էր գրել Լոնդոնի կամ Վիեննայի
կարեւոր թերթերի մէջ, որովհետեւ Պա-
րիզի մեծ ու հարուստ թերթերը, Մա-
տէն, Ժուլիե, էֆո դը Պարի չէին ըն-

դունում և չին էլ կարող արժանանալ
ընդունելու Պրէսանսէի՝ համոզուած ու
գունաւոր սօցիալիստի գրուածքները։ իսկ
միւս թերթերը, մանաւանդ կուսակցա-
կան, նոյնիսկ իր հիմնածը, ինչպէս ի-
մանիքէ, անկարող էին ապահովել նրա աշ-
խատանքը, միջոցների անձկութեան պատ-
ճառով։ Եղած միջոցներն էլ վարելում
էին աւելի ճարպիները։ . . . Եւնա ատիպ-
ուած էր գրել օտար թերթերի մէջ, բա-
ւական ծանր և գուցէ դառն պայմանների
տակ . . .

—Il faut que je gagne ma vie . . .

Այս տիսուր խօսքերը արտասանեց նա
մեր վերջին տեսակցութեան ժամանակ,
աչքերը կիսախուփ, ըստ սովորականին,
առանց ատելութեան դէպի իր շատ բա-
րեկամները, որոնք նրա «ոտքի տակից
գորդ էին քաշում», և առանց ո և է հե-
ռաւոր ակնարկի այն անազին աշխատան-
քին համար, որ նա գործ էր դնում յօ-
գուտ հայ դասի, և նրան նուիրուած օր-
գանների, ինչպէս Պրօ Արմենիա, Պիօպի
դ՛Օրբան . . .

Եւ մենք Հայերս, այնքա՞ն սիրահար
օտարի աջակցութեան և աշխատանքին,
երբեք չկարողացանք գէթ մի չնչին ար-
տայայտութեամբ թեթեւացնել Մեծ Քա-
ղաքայու դրամական վերջին դառնու-

թիւնները։ Պրէսանսէ չստացաւ Հայերից
և ո՛չ մի սանտիմ։ Վերջին տարին քանի
մը բարեկամներ փորձեցին յիշեցնել քաղ-
քենի Հայերին այդ աարրական պարտա-
կանութիւնը, բայց գեռ գործնական ոչինչ
չեղած, ահա աշխատաւորը գերեզման ի-
շաւ . . .

IV

Իր տնակից դուրս, գրասեղանի այդ
խաղաղ աշխատաւորը՝ անվեհեր էր ինչպէս
տուծ : Դրէյֆուսի դատի անմոռաց օրեւ-
րին, երբ ֆրանսիական շօվինիզմը և զին-
ուորական ամբարտաւանութիւնը որոտում
էին ամբողջ աշխարհի ականջին, նա էլ,
իրեւեւ մէկ անդամը փառաւոր գումար-
տակի, Զօլայի, Անատօլ Ֆրանսի, Կէմման-
սի, Շէրէր Կէստնէրի, Բէրնար Լազարի,
Քիյեարի, Օկտավ Միրբօի և ուրիշների հետ
նեառեց ներազգային մեծ կռուի մէջ ու
կանգնեց ամբոխավար ցասումի հանդէպ։

Ո՞վ կարող էր երեւակայել որ այդ ծե-
րունին, մաշուած տարիքից առաջ, ար-
դէն սպիտականեր, կարող է ա դքա՞ն
աւիւն, եռանդ ու կամք կրել իր գիրցած
ու տկար մարմի մէջ։ Զեռք ձեռքի
տուած իր երիտասարդ, սիրեցեալ բարե-
կամին, Պրէր Քիյեարին, նա թափանցեց

Քրանսիական գտաւառը, ու կանգնեց ճակատ առ ճակատ թշնամիների դէմ, — թշնամիները արդարութեան ու Սատանայի-կղզու անմեղ կալանաւորի: Որքան սպառնալիքներ, քանի՞ քանի հարուածներ, ու որքան ահաւոր բառնցքներ: Դաւեցին նրա քարողի, նրա գործի դէմ, գտւեցին նոյն իսկ նրա կեանքի դէմ: Ավիյնօն՝ կատաղած հակառակորդները քիչ մնաց գետի մէջ խեղդաման պիտի անէին նրան: Սակայն ոչինչ կանգնեցրեց նրա մտարշաւը: Նա մնաց անյոզգողդ, Սառնասիրա վասնդի հանդէպ, բարիօրէն արհամարհող սպառնալիքը, անսարդեր քաղաքական բոլոր բամբասանքների դիմաց — նա անցաւ քաղաքից քաղաք, Տուլուղից Ավիյնօն, Օրէանից Պարիզ, գաւառից գաւառ, ուր տեսաւ «վայրենի մարդը», կամ ինչպէս ինքն ասաց՝ «մահը մօտիկից», բայց չընկրկեց ու իր ահագին պայքարով եղաւ արդարութեան յաղթանակի մեծագոյն վարպետներից մէկը: «Ճշմարտութիւնը կը քալէ և ոչինչ կարող է կանգնեցնել նրան»: — և Պրէսսանսէ արդարացրեց Մեծ Գրողի այդ պատգամը, հերոսն վայել սուսնութեամբ, կամ ինչպէս ասաց Սնատօլ Ֆրանս՝ || affrontait le péril en souriant...

Եւ մեզ էլ այդ էր քարողում. «Ճակատեցէք վտանգներին՝ ժպիտով»: Ու հայկական ողբերգութեան ծանրագոյն օրերին, ինչպէս և յուսերի հաղուազիւտ ժամերին, միշտ նոյն հաւատով, նոյն եւ ամսով, նոյն բարեկամութեամբ կրկնում էր. — «Ճակատեցէք վտանգին, պայքարեցէք յոյսով»... Ամբողջ քսան տարի նա զգաց Հայութեան ցաւերը: Պոլիս եղած միջոցին, իբրեւ քարտուղար ֆրանսիական դեսպանութեան, իրան յատուկ նրբամատութեամբ ճանաչեց Թիւրքիան, տեսաւ սեւ րէժիմի վտանգը, և մանաւանդ նախազգաց հայկական աղասամարտի արժէքը, ու Պարիզ գարձած՝ մտաւ այն խումբի մէջ, որը Ֆրանսիայի մայրաքաղաքում, Հայկական Դատի առաջապահը եղաւ: Իբրեւ գործն անդամ «Հայ-Քրանսիական կօմիտէի», որ պայքարեց ամբողջ տասն տարի, իբրեւ մէկը Պրօ Արևենիայի զեկավար ոյժերից, և անձնական բարեկամ Քիյեարի, որի հետ աշխատեց 13 տարի, 1913ին էլ իբրև տնօւըն հայանողաստ օրգանի, Պրէսսանսէ, թէ մասուլի մէջ, սկսած Թանից մինչեւ Խւմանիթէ, թէ՛ Պարլամէնտական բեմի վրայ, որպէս նախազահ «Մարդկային իրաւունքների լիգ»ի և որպէս ատենախօս —

եղաւ մեր դատի գրօշակիրք , պաշտպանը
և հանրույին խղճի խթանողը : Նրա դա-
սական ճառերը Բուրբոնեան պալատի
բեմից՝ Սրիւելքի , Թիւրքիալի և Հա-
յաստանի մասին , միշտ լսուեցան ան-
սահման պատկառանքով :

Իր քաղաքական թշնամիներն անգամ ,
սկսած Բրիանից և Դեկլասաէլից , խոսառ-
վանեցին յաճախ՝ որ նրա հեռացումով ,
ֆրանսիական Պարլամէնտը զրկուեց հե-
ղինակաւոր արեւելագէտից : Նա կենդանի
բառարան ու վասանելի ուղեցոյց էր այն
բոլորի , որ վերաբերում էր օսմանեան
կայսրութեան .—Պրէսսանսէ լոկ համակրող
չէր , այլ զիացող , ոչ միայն սիրող՝ այլ և
ուսումնասիրող :

V

Եւ կ'իրթար միշտ , անարտունջ , ու
պատրաստակամ , ուր նրան կը կանչէր
հայ ցաւը : Լրնդոն գնաց , երբ հայասէր-
ների ժողով կար : Բրիւսսէլ անյաւ , երբ
պէտք էր , Միջազգային ժողովի անու-
նից բոլոքել Համիդեան ոճիների դէմ :
Պարիզի մէջ , բոլոր ժողովներին՝ ուժ-
գին պայքարողն էր միշտ և ամէնքի հետ :
Գնաց Վիեննա : Գնաց Ժէնէվ , որքան
անդամ ովէտք եղաւ , որքան անգամ

կանչուեցաւ , լինի Դրօսակի խմբագրու-
թեան , լինի «Եւրոպայի Հայ Ուսանողա-
կան Միութեան» կողմից :

1902ին էր . Հայկական ցաւերի մռայլ
օրերին , երբ Համիլտ տիրական էր , Եւրո-
պան՝ անտարբեր և Հայութիւնը՝ յուետես :
Ժընէվի մէջ ծրագրուեց կաղմակերպել եւ-
րոպական գլխաւոր կենտրոնների մէջ
հրապարակային մեծ միտինգներ , արթնցը-
նելու յուետեսների յոյսն ու թշնամիների
խիզճը : Մեծագոյն ժողովներից մէկը տեղի
ունեցաւ Ժընէվ , նախագահութեամբ այն
սքանչելի քաղաքացու , որ ժօրժ Ֆալօնն
էր , նախագահը Ժընէվի Հանրապետու-
թեան , և որի այդ օրուան ճառը՝ նախա-
մանեան վերջին ճառը եղաւ տաւանդաւոր
հուետորի բերանում : Մտածող ու զգացող
Ժընէվը ամբողջովին եկած էր լսելու մե-
ծանուն պատապանը ճնշուած ժողովրդի :

Եւ երբ հակայ սրահի մէջ , ծովածաւոլ
բազմութեան առջև Հայկական Տանջանքի
պատկերը վարպետի լեզուով տալուց յե-
տոյ , Պրէսսանսէ անցաւ քաջալերութեան , և
բոնութեան անլիման մերձաւոր յոյսերին ,
սրահը երերաց այն յոյզով և ցասումով ,
որոնք գաղանիքն ունին դարագլուխ կաղ-
մելու մարդոց մտածմունքի և յոլսերի
մէջ : Այդ օրուանից մանաւանդ Հէլվետիան
եղաւ սիրահար Հայ Դատին : Ու այն շա-

բաթը կոչուեցաւ «Հայկական շաբաթ»,
այնքան մեծ էր տպաւորութիւնը...:

Ու այդ հսկայ տպաւորութիւնը թու-
լացնելու նպաստակով էր որ ժընէվի
Թիւրքաց հիւպատոսը, միւս օրն իսկ,
գաղտնի ժողով կաղմոց թիւրք և... յոյն
մի քանի (բարերազդարար՝ մի քանի) ու-
սանողներից, ու նրանց խարելով, իրեւ
բողոք միախնդի դէմ, հաւասարմութեան
հեռագիր ուղարկեց Համիդին, և շքանշան
ու թոշակ առաջարկեց ուսանողութիւնը
վարկաբեկող այդ սքանչելի խմբակի հա-
մար...

— Մի երկրոյէք, ասաց մեծանուն հա-
յասէրը, շատ չի անցնի, և ազատութեան
բողոքին կը միանան Թիւրքերը ևս, բայց
մանաւանդ թիւրք երփառարդները, որ-
պէս զի օսմանեան բողոք դիմադիր տար-
բերի համերաշխութեան մէջ խեղդուի
համիդական շունչը...

Ու երբ, 1907ի վերջը, Պարփի մէջ կա-
յացաւ օսմանեան դիմադիր տարբերի Հա-
մաժողրվը, ուր կողք կողքի նստեցին
թիւրք, հայ, ալբան և մակեդոնացի ոյ-
ժերի ներկալազուցիչները, Պրէսանսէ պա-
տանեկան խանդավառութեամբ ողջունեց
այդ միազորակցութիւնը, իրեւ նախա-
նշան մօտաւոր յաղթանակի...
Եւ նա տեսաւ այդ:

11-326 թ

Արծուի աչքերով հետեւեց նա այս հա-
մագործակցութեան ու ազգերի համե-
րաշխութեան: «Թիւրքիայի փրկութիւնը
ազգերի մերձեցման մէջն է, և ոչ թէ
երկաթուղային մենաշնորհների», ասում էր
նա ցաւով ու հեգնութեամբ: Եւ երբ—յե-
ղափոխութեան «մեղրամսից» յետոյ, Բար-
Ալիի մէջ ծայր տուեցին ներքին գոր-
ծերի նախարար Հագգը բէյի, — յետոյ
Հագգը փաշայի— հակահայկական ձեռ-
նարկները, Պրէսանսէն, իր հեռազրի
մէջ, որ ուղարկեց Պոլիս, Պիէր Քիյեարէն
ի պատիւ սարքւած ճաշասեղանի առէթով,
այս գուշակութիւնը արաւ.

«Երիտասարդ՝ Թիւրքերը վտանգում
«են յեղափոխութեան գործը: Առանց ազ-
գերի մերձեցման և համերաշխութեան»
«Թիւրքիան չէ կարող ապրել: Աղաջում
«եմ բոլորին՝ անտես չաւնել իմ այս
և խօսքերը...»:

Շատ քիչերը, աւազ, լսեցին այս խոր-
հուրդը, և Պրէսանսէն վերջին տարինե-
րը, սրտի անհուն տիրութեամբ տեսաւ
թէ որքան ձշմարփան էր իր գուշակու-
թիւնը.— շատ անգամ դրեց այս մասին,
թիւրք գործողներին յաճախ այդ խոր-
հուրդը տեսեց Պարփի մէջ, ամէն առի-
թով ներշնչումներ արեց, — սակայն ա-
ռանց լսելի լինելու...
Բարեկամը ճանաչող չեղաւ...



VI

Աշխատանքի սիրահար էր նա : Բայց
յամառ աշխատանքի վրայ թագաւորում էր
մեծ տաղանդ, վիթխարի մի ուղեղ,
որ ինքն իսկ աճագին մատենադարան էր :
Փիլսոփայող ու ուսումնասիրող, նա խո-
րապէս թափանցում էր երեւոյթներն ու
գէպէրը : Տէր էր անսովոր յիշողու-
թեան : Իր գրուածքները և ատենա-
խօսութիւնները՝ լի անվերջ փաստերով,
թիւերով և անուններով, շատերին կարծել
էին տալիս թէ Պրէսսանսէն այս բոլորը
պատրաստելիս, դիմում էր իր գրադա-
րանին կամ բառարանների : Բոլորովն ոչ:
1900-ին, Շվէյցարիա ճամբորդելիս, նա
չարունակում էր ամէն օր ուղարկել
Թանին, խմբագրական-քազաքական հը-
րաշալի յօղուածներ, հիմնաւորուած ան-
վերջ թիւերով, անուններով ու պատմա-
կան փաստերով, և այդ բոլորը նա գրում
էր առանց գրքերի ու բառարանների,
յաճախ վագօնի մէջ, կամ պատահական
հիւրանոցի մեջ, կամ պատահական
գիտութեան ու յիշողութեան :

Հայկական կեանքի մէջ եւս լայն հըմ-
տութիւն ունէր, և քաջածանօթ էր Հա-
յոց պատմութեան, Հայոց նոր կեանքին և
այդ կեանքի անշան մանրամասներին իսկ :

Մի օր, 1907ին, Խրիմնանի մահուան ա-
ռիթով, խօսք եղաւ, Պրէսսանսէի ներկա-
յութեամբ, Կաթողիկոսական ընտրութեան
մասին : Մեր հայրենակիցներից մէկը,
վստահ իր հմտութեան, յայտնեց՝ որ ընտ-
րութեան պիտի մասնակցին Ռուսաստանի
հինգ թեմերի աշխարհական պատգամա-
ւորներ :

— Հինգ չէ, այլ վեց, նկատեց ծերու-
նին, գուք Ռուսաստան վեց թեմ ունիք :

Մի ուրիշ անգամ, 1904ին, Սասու-
նի գէպքերի ժամանակ, խօսք անցաւ
Հայկական Ազատավայրի գիւղերի մասին :
Երբ արտասանուեց Սպազանք անունը,
մէկը Հայերից, անախորժ սիսալմունքով
աւելացրեց .

— Այդ վայրը՝ Պարսկաստանի մէջ է :

— Զեր սասածը, նկատեց Պրէսսանսէ հա-
մեսարէն, Սպահանն է, իսկ Սպազանքը
գիւղ է, Սասունի մէջ . . .

Այդ հեղինակաւոր մեծութեան հետ
միասին, Մաքի Հական վերին աստի
ճանի քնքոյշ էր գէպի դիմացինը, կը լը-
սէր սիրով, ուշադրութեամբ, յարդան-
քով : Նա ոչ միայն ուսուցանում էր աւ-
ցելուին, այլ և ուսանում էր նրանից :

Քաղաքավորի գէպի մարդիկ, նա
դառնում էր անողոք ու կատաղի, նոյն
իսկ բարեկամի հանդէպ, երբ նկատէր բա-

բոյական շեղում կամ գասալքութիւն։ Խղճի բլորեղացումն էր նա, և տառել չէր կարող սիրուն խօսքերով վարագուրուած ագեկութիւնները։ Ու ոչ ոք այնքան խիստ չէր դէպի ֆրանսիական սոցիալիստների պակասութիւնները, որքան նա, ոչ ոք այնքան թոյնով չէր խօսում դասալիքների մասին, որքան նա, ընէր այդ աննշան մի քաղաքացի թէմենանուն՝ ինչպէս Երիսան կամ Միլրուն։

Երբ Միլրան, նախարար եղած միջոցին, հակառակ իր ընկերվարական անցեալին, Յարից շքանշան ընդունեց, և շատ մարդակերպներ («նախանձով») խօսեցին այդ décorationի մասին, Պրէսանսէ վշտացած ու ցանկութացականչեց։

— Il à reçu un crachat dans sa poitrine...

Ու այդ խօսքը պտոյտ գործեց ամբողջ մոտաւորական Պարիզի մէջ, Պարլամենտից մինչեւ Էլիպէ։

Մի այլ դէպք։

Լոնսոնի մէջ նշանակուած էր Օսմանեան Կայսրութեան բարեկամների ժողով։ Կանչուած էր և՝ Պրէսանսէ, Պարիզից։ Ներկայ էր նոյնպէս և մի ծանօթ թիւրք գործիչ, բարեկամ Պրէսանսէի, որ յետոյ Սահմանադրութեան օրով, շատ կարեւոր պաշտօն ունեցաւ Պոլիս։ Երբ իօսում էին Համբդը սանձերւ միջոցների մասին, ժողովը այն կարծիք պաշտպանեց՝ թէ Եւրոպան պէտք է միջամտէ և սանձէ Ոճրագործի բաղուկը։

Թիւրք գործիչը, ազգայնամոլ ու անհեռատես, ելաւ յայտարարեց որ՝ եթէ եւրոպան միջամտէ, այն ժամանակ չամրդու իրաւունք ունի նոր ջարդ կազմէւու։

—Պարո՞ն, այսաեղ պատուաւոր մարդիկ են նստած, որոտաց Պրէսանսէ. ձեր անելք՝ ահա, —ու ցոյց առւեց գուուր։

Ու ամէն անգամ երբ կը յիշէր այդ դէպքը, պատուական ծերունին կ'աւելցնէր թախիծով։

—Այդպիսի դեկավարներով թուրքիան չի փրկուի...

Եւ նա սրտամօրմոք վիշտը ունեցաւ տեսնելու կործանումը գարեւոր կայսրութեան, որ կարող էր փրկվել սահմանադրական սկզբունքների արդար ու տեւական գործողութեամբ...

VII

Մինչ իր դասենկերները, շատերը իր տարեկիցներից, առանց իր տաղանդի ու կապերի, բարձրացան կեանքի սանդուխներով դէպի նախարարական պաշտօն, դէպի Ոսկի Հորթը, դէպի տիտղոս ու ընքանչաններ — նա, բոլորովին այլ ճամբայ բռնեց։ Խոկեց իր կապերը «աթոռների» ու «տաք անկիւնների» հետ, հրաժարուեց այն բոլորից, ինչ ընկերայն արդի կազմն է տալիս, Դրէյֆուսական պայքարի յուղումնալից օրերին՝ յիս գարձրեց «Լէժիօն ո՛Շնէօռա» ասպետի իրաւունքը, և հազիւ մի քանի տարի դիւնագիտական ասպա-

ըէղի մէջ մնալուց յետոյ թօթափեց բոլոր
պաշտօնների փոշին, ու զինուոր գրուեց
Գաղափարին:

Նրա բեմը-- հանրային գործը եղաւ.
Նրա զէնքը--իր գրիչը. Նրա փառքը-- իր
նուաճումները: Բայց մանաւանդ իր ան-
կաշառ շիտակութիւնը, որին նա հաւա-
տարիմ մնաց նոյնիսկ քաղաքական աս-
պարէզի վրայ, այնքան գայթակղիչ ու
այնքան սայթաքուն...

Ու րիշները փոքր պաշտօններից մէծին
հասան: Նա ձգեց բոլոր պաշտօնները: Իր
ժամանակակիցները փոքր աներից անցան
դղեակներ: Նա դղեակից անցաւ Պոր-
Ռուայալի համեստ անակը: Տւեց, բայց
երբէք չը ստացաւ: Եւ կոթնած իր ներ-
քին ոյժին, տաղանդին ու անրիծ մաք-
րութեան, նա աւելացրեց Մեծ Պանթէռնի
փառունակ շարքերին չնաշխարհիկ տիպը
—Մեծ իդէալիստը:

Քառասուն տարի աշխատեց նա, յա-
մառէն, անդադրում, գրիչ՝ ձեռքին,
խօսքը՝ շրթունքներին, և երազները՝ աչ-
քերի մէջ: «Գրքերի կանող» եղաւ, բայց
վայրկեան անգամ չը կղզիացաւ, չը կը-
տրվեց իրական կեանքի դաժան ցաւերից
և թէեւ սիրահար ու վարպետ դասական
գրականութեան, չարհամարհեց օրուան
հրատապ ինդիրները և ոչ էլ ցաւագար
մարդկութեան առօրեայ դարդերը: Եւ ոչ
միայն չը կղզիացաւ, այլ ձերմակահեր տա-
րիքի մէջ, մարտիկ զինուոր գրվեց սօցիա-
լիստական բանակի և մտաւ կրակոտ, երբեմն

նոյնիսկ յեղափոխական պայքարի մէջ ...
Եւ անա թէ ինչ վեհ պարզութեամբ է
պատկերացում իր աշխատանքը 1908ի
օգոստոսին գրած իր երկառող կոսակով, որ
գտնուեց նրա թղթերի մէջ.

«Ենդրում եմ կրօնական տաւած բա-
ռ դում չը կատարել ինձ համար, չէ թէ այն
«պատճառով որ չիմ հաւատում Սիրոյ եւ
«Սրբարութեան Սածուն, այլ որով հե-
տեւ ես խորհելով ինձ ինձ բաժանեցի բո-
ռ լոր եկեղեցիներից, եւ կրօնի առաւելա-
«գոյնը զայ Սօցիալիզմի մէջ, այնպէս
«ինչպէս ես եմ հասկացել նրան...»

«Կանանք չը տւեց՝ ինչ պէտք էր տալ.
«յոյս ունիմ որ ամէն ոք ներողամիտ կը լինի
«դէպի ինձ...»

—Եւ ո՞վ կարող էր երեւակայել թէ
ես պէտք է թաղեմ Քիյեարը, փոխանակ
որ նա ինձ թաղէր ...:

Պրէսսանսէն էր այս խօսքերը արտա-
սանող, 1912ի փետրուարին, Քիյեարի գե-
րազմանի, առջեւ, յուզուած ու դողդո-
ղագին:

Երկու տարին չանցած, ինքն էլ գնաց:
Գնացին ու պիտի երթան Մարդկու-

թեան իդէալի մեծ զինուորները, մէկիկ մէ-
կիկ, մուրազագուրկ, կարօտը չառած ...:

Իսկ Յաղթանակը, այնքան թանկար-
յէք, եօթն սարերի ու եօթն ծովերի յե-
տեւն է տակաւին ...

Արդարութեան զինուորի վերջին յօդ-
ւածը, «Գիերագոյն միջոց», գրուած մահվա-
նից 48 ժամ առաջ, նուիրած էր Հայաս-

տանին : Վերջին թրթումը նրա սրտի ,
վերջին հառաջանքը նրա մեծ մտքին՝ ու-
րեմն Հայ Աշխարհի համար էր , որի տան-
ձանքը երգեց , առանց արեւը տեսնելու ,
ապադան երաղեց , առանց «Գերազոյն
ժամը» վայելելու :

Սակայն մարդարէական նրա երազը ,
ինչած բարձրացող ժողովրդի ասնջանքից
ու յոյսերից , իր աներկրայ իրականացու-
մը պիտի ունենայ հակառակ բոլոր ան-
կումներին , ու բոլոր դժբաղդութիւնների
վրայով , որովհետեւ ինչպէս բանաստեղծը
ասաց , «Վազ թէ ուշ գարունը պիտի
գայ» և Սրեան Զորերի մէջ տառապան-
քի աւերակների վրա՝ պիտի չողայ արեւը
աղաստութեան , ու խաղաղ աշխատանքի :

Հայրերը իրանց վիրաւոր ուսերի վրայ ,
ստրկութեան լուծ կրեցին լացով ու ախով :
Որդիքը , լուծի փոխարէն՝ ամուր ու-
սերի վրայ Արդարութեան Զինուորի տ-
ժիւնը տարան Մօնպառնասի դամբարանը ,
լացով որ հպարտ էր , ախով որ վաղւան
յոյն ունէր իր մէջ . . .

Իսկ Վազը , թուները ստրուկ պապերի
կ'երթան գէպի Շատիյօնի համաստ գերեղ-
մանոցը , անշղթայ ձեռքերին բռնած Ե-
րախտագիտութեան պասկը , հիւսած մեր
դաշտերի կակաչներից , կարմիր ինչպէս
թափւած արիւնը , ու անբիծ շուշաններից
սպիտակ՝ ըրպէս երազած արդարութիւնը ,
այս մակագրով՝

«Հայստանի Մեծ Բարեկամին
Ազատ Հայերից»



ՀՀ Ազգային գրադարան



NL0508991

ԳԻՆ 40 ՓԱՐԱ